

# ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ .....	1
1.1. Արդյունաբերություն .....	2
1.2. Շինարարություն .....	3
1.3. Ծառայություններ .....	4
1.4. Առևտուր .....	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ .....	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ .....	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ .....	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ .....	9
5.1. Պետական պարտք .....	9
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ .....	11
6.1. Գնաճ .....	11
6.2. Ավանդներ .....	11
6.3. Վարկեր .....	12
6.4. Դրամական փոխանցումներ .....	14
7. ԱՄՓՈՓՈՒՄ .....	14

## 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


Բարձր տնտեսական աճի տեմպը սկսել է աստիճանաբար դանդաղել, ինչպես և սպասվում էր տարեսկզբին: 2023 թվականի առաջին կեսին արձանագրված բարձր տնտեսական աճի ցուցանիշները հիմնականում պայմանավորված էին այն հանգամանքով, որ նախորդ տարվա առաջին ամիսներին ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքները ՀՀ տնտեսության վրա դեռևս չէին արտացոլվել: Այսինքն՝ համեմատվող շրջանում դեռևս նշանակալի չէին այն գործոնները, որոնք ապահովել են բարձր տնտեսական աճը (այս երևույթն այլ կերպ կարող ենք անվանել բազայի էֆեկտ): Այս տրամաբանությամբ, երբ համեմատվող ժամանակահատվածում սկսում են ներառվել արտաքին շուկի դրական ազդեցությունները, ընթացիկ տարվա աճի տեմպը դանդաղում է: Այսպես, հուլիսին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 6.0%՝ նախորդ ամսվա նկատմամբ դանդաղելով 0.8 տոկոսային կետով (որն էլ իր հերթին արդեն իսկ դանդաղել էր 6.8 տոկոսային կետով): Արդյունքում կուտակային՝ հունվար-հուլիս ամիսների աճը հունվար-հունիսի համեմատ նույնպես դանդաղել է՝ կազմելով 10.4% (դանդաղելով 1.0 տոկոսային կետով):

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %**




2023թ. հունվար-հուլիս ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ի աճին կազմել են 9.0 և 3.4 տոկոսային կետ: Շինարարության ճյուղն էականորեն ավելի փոքր նպաստում է ունեցել՝ շուրջ 0.8 տոկոսային կետ, իսկ արդյունաբերության նպաստումը նվազել է նախորդ ամսվա համեմատ՝ կազմելով 0.1 տոկոսային կետ:

**Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2023թ. հունվար-հուլիս ամիսներին, տոկոսային կես**



**1.1. Արդյունաբերություն**

**Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %**




**Արդյունաբերության ոլորտում տնտեսական ակտիվության անկումը շարունակվում է:** Արդյունաբերության ոլորտի զարգացումները բավական մտահոգիչ են դարձել վերջին ամիսներին: Հունիս և հուլիս ամիսներին գրանցվել է տնտեսական ակտիվության անկում՝ համապատասխանաբար 7.4% և 2.4%-ով: Արդյունքում էապես դանդաղել է արդյունաբերության կուտակային աճի ցուցանիշը՝ հունվար-հուլիսին հասնելով 0.5%-ի:

Արդյունաբերության հունվար-հունիս<sup>1</sup> ամիսների 1.0% աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 4.3% աճով, որի նպաստումը կազմել է 2.6 տոկոսային կետ, էապես՝ շուրջ 1.6 տոկոսային կետով, դանդաղելով հունվար-հունիսի նկատմամբ: Ընդ որում, մշակող արդյունաբերության ոլորտում հունիսին՝ նախորդ տարվա հունիսի նկատմամբ գրանցվել է անկում շուրջ 5.9%-ով:

Հանքարդյունաբերության ոլորտում հունվար-հունիս ամիսներին շարունակվել են անկման միտումները, որի չափը խորացել է՝ կազմելով 6.9% (նախորդ ամսվա անկումը՝ 5.3%), իսկ անկման նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է -1.7 տոկոսային կետ: «Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 0.2% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով զրոյական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 8.6% աճ, որն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

## 1.2. Շինարարություն

**Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %**




**Շինարարության ոլորտի աճը շարունակում է մնալ բավական բարձր մակարդակում:** Շինարարության ոլորտի աճը հուլիսին կազմել է 17.8%, որը թեև փոքր-ինչ դանդաղել է հունիսի նկատմամբ, սակայն մնում է բարձր մակարդակում: Հունվար-հուլիս ամիսների աճը, ընդհակառակը, արագացել է՝ կազմելով 17.2%, հունվար-հունիսի համեմատ բարձր լինելով 0.2 տոկոսային կետով: Շինարարության ոլորտում բարձր աճերի պահպանումը պայմանավորված է բարձր

<sup>1</sup> Արդյունաբերության հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

հիպոթեքային վարկերի համար վճարված տոկոսավճարների՝ եկամտային հարկից հետվերադարձի ծրագրի գործողությամբ:

### 1.3. Ծառայություններ

**Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %**




**Ծառայությունների ոլորտի աճի տեմպն էապես դանդաղել է:** Ծառայությունների ոլորտում հուլիսին գրանցվել է 5.8% աճ՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.8 տոկոսային կետով, սակայն բավական ցածր լինելով նախորդ ամիսներին աճերից: Կուտակային՝ հունվար-հուլիս ամիսների աճը ևս էապես դանդաղել է՝ հասնելով 14.9%-ի՝ նախորդ ամսվա 16.8%-ի դիմաց:

Ծառայությունների ոլորտում, ըստ հունվար-հունիս ամիսների տվյալների<sup>2</sup>, աճին մեծամասամբ՝ 9.7 տոկոսային կետով նպաստել է «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտի շուրջ 56.8% աճը: Էական նպաստում են ունեցել նաև «տրանսպորտ» և «կացություն և հանրային սնունդ» ենթաոլորտների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.1 և 2.1 տոկոսային կետ: «Ֆինանսական և ապահովագրական գործունեության» ոլորտում գրանցվել է անկում՝ 3.5%-ով, ինչն ընդհանուր ծառայությունների աճին հակազդել է 1.1 տոկոսային կետով: Վերջինս էլ հիմնականում ապահովել է ծառայությունների աճի տեմպի դանդաղումը:

<sup>2</sup> Ծառայությունների ոլորտի հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

## 1.4. Առևտուր


**Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %**



**Առևտրի աճի տեմպերը որոշակիորեն դանդաղել են, սակայն մնում են բարձր մակարդակում:** Արտաքին զարգացումների դրական տնտեսական հետևանքներն առևտրի վրա դեռևս պահպանվում են, սակայն հունիսին և հուլիսին աճի տեմպերը որոշակիորեն ցածր են նախորդ ամիսների ցուցանիշներից: Հուլիսին գրանցվել է 20.4% աճ՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով: Հունվար-հուլիս ամիսների աճը, սակայն, դանդաղել է՝ կազմելով 23.0%:

## 2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

**Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ<sup>3</sup>, %**



<sup>3</sup> Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում նախկինում հրապարակվածի համեմատ հունվար-հունիս ամիսների ցուցանիշները փոքր-ինչ վերանայվել են դեպի վերև:


**Արտահանման աճի տեմպը վերջին ամիսներին զգալիորեն դանդաղել է:** 2023թ. հուլիսին արտահանման աճը կազմել է 15.6%, ինչը, թեև բարձր է հունիսի աճից, սակայն նախորդ ամիսների աճերից էապես ցածր մակարդակում է գտնվում: Հունվար-հուլիս ամիսների աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ կազմելով 62.1% և հունվար-հունիսի աճից ցածր լինելով 11.8 տոկոսային կետով: Հատկանշական է, որ վերջինս գերազանցում է բազայի էֆեկտի չափը՝ ցույց տալով, որ արտահանման նվազման վրա ազդում են նաև այլ գործոններ:

2023թ. հունվար-հունիս ամիսների<sup>4</sup> արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի համապատասխանաբար 8.4, 2.3 և 14.8 անգամ աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր արտահանմանը կազմել են 26.4, 20.3 և 17.3 տոկոսային կետ: Արտահանման աճին բացասական նպաստում են ունեցել «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի, ինչպես նաև «բուսական ծազման արտադրանք» և «կենդանի կենդանիներ և կենդանական ծազման արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 25.3%, 20.2% և 19.4% նվազումները:

Արտահանման աճի տեմպի դանդաղումը մեծամասամբ (շուրջ 11.3 տոկոսային կետով) պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների աճի տեմպի դանդաղմամբ: Կարևոր է նշել նաև, որ աճի տեմպի դանդաղման գործում էական դեր ունի նաև «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման աճի տեմպի դանդաղումը (հունվար-մայիսի 35.5%-ից հունվար-հունիսին դարձել է 17.7%), որի նպաստման չափը 6.5-ից դարձել է 3.3 տոկոսային կետ: Այս ապրանքախմբի գծով զարգացումները չեն պայմանավորվում վերարտանահման երևույթով, հետևաբար դրա աճի տեմպի դանդաղումը կարող է վկայել ՀՀ տնտեսության մրցունակության անկման մասին:

<sup>4</sup> Արտաքին առևտրի հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

**Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ<sup>5</sup>, %**



**Ներմուծման աճի տեմպը նույնպես էականորեն դանդաղել է:** Ներմուծման ծավալների աճը 2023թ. հուլիսին կազմել է 19.7%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 14.0 տոկոսային կետով: Հունվար-հուլիս ամիսների աճի տեմպը դանդաղել է շուրջ 10 տոկոսային կետով՝ կազմելով 63.0%:

Ներմուծման աճը 2023թ. հունվար-հունիս ամիսներին<sup>6</sup> հիմնականում պայմանավորված է եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ներմուծման աճերով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են համապատասխանաբար 25.3, 21.1 և 13.2 տոկոսային կետով: Վերջիններս էապես նվազել են նախորդ հունվար-մայիս ամիսների ցուցանիշների նկատմամբ՝ պայմանավորելով ներմուծման աճի դանդաղումը:

**3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ<sup>7</sup>**

**Անվանական աշխատավարձի աճի տեմպը դանդաղում է, սակայն դեռևս պահպանվում է բարձր մակարդակում:** Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2023 թվականի հունվար-հունիս


<sup>5</sup> Ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում նախկինում հրապարակվածի համեմատ փետրվարից մինչև հունիս ամսվա աճի ցուցանիշները փոքր-ինչ վերանայվել են դեպի ներքև:

<sup>6</sup> Արտաքին առևտրի հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

<sup>7</sup> Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 19.5%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.3 տոկոսային կետով)՝ կազմելով 261,376.0 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 22.1%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.8 տոկոսային կետով)՝ կազմելով 290,141.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է զգալիորեն ավելի ցածր՝ 9.2% տեմպով և կազմել է 192,109.0 դրամ (պետական հատվածում աշխատավարձի աճի տեմպը նախորդ ամսվա համեմատ արագացել է 0.3 տոկոսային կետով):


**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2022-2023թթ. հունվար-հունիսին, %**



**4. ՓՈՒՍԱՐԺԵՔ**

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)**





**Ռ-Դ ռուբլու նկատմամբ արժևորման տեմպը շարունակում է արագանալ՝ հասնելով անհանգստացնող մակարդակների:** Հունվար-հուլիս ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է շուրջ 18.2%-ով, եվրոյի նկատմամբ՝ 18.3%-ով, իսկ Ռ-Դ ռուբլու նկատմամբ՝ 29.8%-ով: ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ արժևորման տեմպը դանդաղում է բազայի էֆեկտի ազդեցությամբ, սակայն Ռ-Դ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը էապես արագացել է (պայմանավորված Ռ-Դ ռուբլու դիրքերի թուլացմամբ)՝ հասնելով գրեթե 30%-ի: Դա նշանակում է, որ ՀՀ ապրանքների գնային մրցունակությունն էապես նվազել է Ռ-Դ շուկայում, ինչն էլ հանգեցնում է արտահանման տեմպերի՝ բազայի էֆեկտը գերազանցող չափով դանդաղման:

## 5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ<sup>8</sup>

### 5.1. Պետական պարտք


**ՀՀ պետական պարտքը շարունակում է աճել՝ հիմնականում պայմանավորված ներքին պարտքի աճով:** 2023թ. հուլիսին ՀՀ պետական պարտքի ԱՄՆ դոլարով արտահայտված ծավալի աճը կազմել է 13.8%, իսկ դրամային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքն աճել է 7.8%-ով:

<sup>8</sup> Պետական բյուջեի (եկամուտներ, ծախսեր, պակասուրդ) հուլիս ամսվա ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճելով 14.6%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 8.6%-ով: Քանի որ զարգացումների այս պատկերի հիմնական պատճառը ՀՀ դրամի արժևորումն է, դիտարկելով դրամով արտահայտված ներքին պարտքը՝ նշենք, որ այն հուլիսին՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 24.3%-ով, իսկ դոլարային արտահայտությամբ արտաքին պարտքն աճել է 4.5%-ով: Ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում փոքր-ինչ նվազել է՝ հուլիսի վերջի դրությամբ կազմելով 43.4%:

**2023թ. հուլիսին պետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումը շարունակվել է:** Կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2023թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ նվազել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 11.1%, սակայն նախորդ տարվա նույն ամսվա համեմատ դեռևս գտնվում է բարձր մակարդակում՝ շուրջ 0.4 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսեր հուլիսին չեն տեղաբաշխվել: Երկարաժամկետ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը հուլիսին նույնպես կազմել է 11.1%՝ մայիսի (հունիսին երկարաժամկետ պարտատոմսերի թողարկում չի իրականացվել) նկատմամբ նվազելով 0.6 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա հուլիսի նկատմամբ՝ 0.8 տոկոսային կետով: Տոկոսադրույքների նվազումը հիմնականում պայմանավորված է ՀՀ ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցմամբ:


**Գծապատկեր 11. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %**



## 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 6.1. Գնաճ


Գծապատկեր 12. 12-ամսյա գնաճ, %



**2023թ. հուլիսին գնաճը շարունակել է մնալ բացասական տիրույթում:** 2022 թվականին և 2023թ. սկզբում արձանագրված բարձր գնաճի տեմպը ընթացիկ տարվա մարտից սկսած կտրուկ դանդաղում է, իսկ հունիս և հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ գրանցվել է գնանկում: Գնաճի դանդաղումը հիմնականում պայմանավորված է ներմուծված ապրանքների գների նվազմամբ, որտեղ իր դերն ունի նաև փոխարժեքի արժևորված մակարդակը: ՀՀ ԿԲ-ն, արձագանքելով գնաճային միջավայրի զարգացումներին, երկու անգամ (հունիսին և օգոստոսին) նվազեցրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը 0.25-ական տոկոսային կետով:


### 6.2. Ավանդներ

Գծապատկեր 13. Ավանդների 12-ամսյա աճը, %



**2023թ. հուլիսի դրությամբ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների աճը մնում է բարձր մակարդակում:** 2023թ. հուլիսի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 25.5%-ով՝ հունիսի համեմատ դանդաղելով 1.8 տոկոսային կետով: Ավանդների ծավալի բարձր աճը պայմանավորված է ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 22.8% և 35.0%:

**Գծապատկեր 14. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ**




Ավանդների աճին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերը՝ համապատասխանաբար 9.6 և 7.9 տոկոսային կետով: Ռեզիդենտների ավանդների շարքում էական նպաստում է ունեցել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը, որի նպաստումը կազմել է շուրջ 6.5 տոկոսային կետ:

**6.3. Վարկեր<sup>9</sup>**

**Վարկերի ծավալների աճի տեմպը շարունակում է արագանալ:** ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2023թ. հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 16.5%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.9 տոկոսային կետով:


<sup>9</sup> Վարկերի վերաբերյալ վիճակագրությունը՝ ըստ տնտեսության ոլորտների դեռևս չի հրապարակվել, այդ պատճառով սույն տեղեկանքում այդ տեղեկատվությունը ներառված չէ:

**Գծապատկեր 15. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %**



Վարկերի աճը տեղի է ունեցել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճի հաշվին, որոնց աճերը կազմել են համապատասխանաբար 16.9% և 10.7%, իսկ նպաստումները՝ 16.0 և 0.6 տոկոսային կետ:

**Գծապատկեր 16. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %**




Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է ինչպես տնային տնտեսություններին, այնպես էլ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 10.2 և 6.7 տոկոսային կետ: Ընդ որում, հատկանշական է, որ իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի ծավալների աճի տեմպը տարեսկզբին բացասական էր, սակայն վերջին ամիսներին մտել է դրական տիրույթ և էականորեն արագացել է՝ հուլիսին հասնելով 13.0%-ի: Իրավաբանական անձանց վարկերի աճը հիմնականում արտացոլվում է ծառայությունների

(հիմնականում՝ ֆինանսական և ապահովագրական գործունեություն), շինարարության և առևտրի ոլորտներում:

#### 6.4. Դրամական փոխանցումներ

**Գծապատկեր 17. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար<sup>10</sup>**



**Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ շարունակում է մնալ ցածր մակարդակում:** 2023թ. հունիսին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 130.4 մլն ԱՄՆ դոլար՝ էապես ցածր լինելով տարեսկզբի և նախորդ տարվա վերջին ամիսների ցուցանիշներից: Հունվար-հունիս ամիսներին դեպի ՀՀ փոխանցված գումարների զուտ ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 9.7%-ով: Ընդ որում, նվազումը հիմնականում պայմանավորված է արտահոսքի շուրջ 2.3 անգամ աճով, մինչդեռ ներհոսքը աճել է շուրջ 56.4%-ով:

## 7. ԱՄՓՈՓՈՒՄ

**1. Տնտեսական ակտիվության աճի բարձր տեմպը շարունակում է դանդաղել, ինչպես և սպասվում էր:** 2023 թվականի առաջին ամիսներին գրանցված տնտեսական աճի բարձր տեմպը պայմանավորված էր նախորդ տարվա սկզբում ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով ՀՀ տնտեսության համար առաջացած դրական գործոններով, որոնց ազդեցության

<sup>10</sup> Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը (հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել)՝ ԱՄՆ դոլարով:

չափը աստիճանաբար ավելի քիչ է արտացոլվում ընթացիկ տարվա տնտեսական ակտիվության ցուցանիշներում: Արդյունքում ՏԱՑ-ի տեմպը նվազում է վերջին ամիսներին: Այս երևույթը, եթե այլ շուկեր չլինեն, կշարունակվի նաև հաջորդ ամիսներին, արդյունքում ականատես կլինենք ՏԱՑ-ի հետագա դանդաղմանը:

**2. Արդյունաբերության ոլորտի զարգացումները շարունակում են մնալ բավական մտահոգիչ:** Արդյունաբերության ոլորտում հունիս և հուլիս ամիսներին գրանցվել է տնտեսական ակտիվության անկում՝ համապատասխանաբար 7.4%-ով և 2.4%-ով: Արդյունքում էապես դանդաղել է արդյունաբերության կուտակային աճի ցուցանիշը՝ հունվար-հուլիսին հասնելով 0.5%-ի: Ընդ որում, անկման պատճառներից է նաև մշակող արդյունաբերության նվազումը, որը հունիսին նախորդ տարվա հունիսի նկատմամբ նվազել է շուրջ 5.9%-ով: Արդյունաբերության ոլորտի՝ հատկապես մշակող արդյունաբերության բացասական դինամիկան խոսում է ՀՀ տնտեսության մրցունակության անկման մասին, որը պայմանավորված է նաև փոխարժեքի վարքագծի դրսևորումներով:

**3. Արտահանման աճի տեմպը նույնպես կտրուկ դանդաղել է:** Արտահանման աճի տեմպի դանդաղումը առավելապես (շուրջ 11.3 տոկոսային կետով) պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների աճի տեմպի դանդաղմամբ: Վերջինս հանդիսանում է վերարտահանման հիմնական ապրանքախումբը, և դրա աճի տեմպի նվազումը պայմանավորված է բազայի էֆեկտով: Սակայն, հունվար-հունիս ամիսներին էապես դանդաղել է նաև «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման ծավալների աճի տեմպը (կազմելով 17.7%՝ հունվար-մայիսի 35.5%-ի դիմաց): Այս ապրանքախմբի գծով զարգացումները չեն պայմանավորվում վերարտահանման երևույթով, հետևաբար դրա նվազումը նույնպես վկայում է ՀՀ տնտեսության մրցունակության անկման մասին:

**4. Գնաճի տեմպը շարունակել է մնալ բացասական տիրույթում:** Երկար ժամանակահատված բարձր գնաճից հետո՝ հունիս և հուլիս ամիսներին, գրանցվել է գնանկում, որը բնականաբար էապես ցածր է ԿԲ թիրախից: Թիրախից ցածր գնաճը նույնպես բացասական երևույթ է տնտեսության համար: Գնաճի դանդաղումը հիմնականում պայմանավորված է ներմուծված ապրանքների գների անկմամբ: Այնուամենայնիվ, ՀՀ կենտրոնական բանկն արձագանքել է իրավիճակին՝ երկու անգամ (հունիսին և օգոստոսին) նվազեցնելով դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**